«Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

<<ԴԻԴԱԿՏԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ>>

հետազոտող ուսուցիչ՝ Ա. Ծովյան

ղեկավար՝ Աշոտ Խաչատրյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն…….

2. Աշխարհագրության դասավանդման առանձնահատկությունները սովորողների պատկերային հիշողության ձևավորման նպատակով……..

3.Եզրակացություն ……..……..……..

4.Գրականություն……..……..……

ԴԻԴԱԿՏԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում կրթությունը վերերածվում է կարևոր գործոններից մեկի, ինչն ապահովում քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումը, տնտեսական աճը, սոցիալական կայունությունը: Այս հետազոտական աշխատանքի արդիականությունն ու կարևորությունը կայանում է նրանում, որ աշխարհագրություն գիտությունն ունի կարևոր դեր ու տեղ մարդու կյանքում և մեծ է գիտության առանձնակի կապը մարդու կյանքի և գործունեության հետ: Ուստի կարևոր և խիստ արդիական է պատկերային հիշողության ձևավորմանը նպաստող մեթոդների ու հնարների կիրառումը դասապրոցեսում: Դպրոցական աշխարհագրությանը տալով տարածական ու պատկերային լինելու հնարավորություն: Հենց այս իմաստով դիդակտիկ պարագաների օգտագործումը սովորողների պատկերային հիշողության ձևավորման նպատակով՝ աշխարհագրության դասի օրինակով կարել է համարել արդիական:

<<Դիդակտիկ պարագաների օգտագործումը սովորողների պատկերային հիշողության ձեվավորման նպատակով՝ աշխարհագրության դասի օրինակով>> թեմայի նպատակն է՝ դիտազննական պարագաների կիրառմամբ նպաստել աշակերտների պատկերային հիշողության ձևավորմանը:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են

- Ուսումնասիրել հանրակրթական դպրոցում դիդակտիկ պարագաների ազդեցությունը սովորողների պատկերային հիշողության ձևավորման գործում
- Մշակել դպրոցում իրականացվող աշխատաձևեր՝ սովորողների աշխարհագրական գիտելիքների յուրացման որակի բարձրացման համար

- Իրականացնել բնագիտափորձ դիդակտիկ պարագաների ազդեցության գնահատման նպատակով

Սովորողների վրա աշխարհագրության առարկայի դասավանդման ունեցած դերի, նշանակության և ազդեցության մասին խոսելուց առաջ հարկավոր է առաջին հերթին պատկերացում կազմել աշխարհագրության դասավանդման գործընթացի մասին: Այն բաղկացած է դասավանդման մի շարք մեթոդներից ու եղանակներից.

Դիդակտիկան, որը նշանակում է ուսուցման և դաստիարակության տեսություն, ուսուցման գործընթացը դիտարկում է որպես փոխներգործության մեջ գտնվող երկու տարբեր գործընթացներ, այսինքն՝ աշակերտների ճանաչողական գործունեությունը՝ սովորելը, և ուսուցչի մանկավարժական գործունեությունը՝ սովորեցնելը:

Զննականությունը հաղորդվող ուսումնական ինֆորմացիայի պատկերավորությունն է, մասնավորապես՝ նկարներով, սխեմաներով, մոդելներով և աղյուսակներով հագեցված լինելը, որի շնորհիվ ապահովվում է անալիզատորների միաժամանակյա աշխատանքն ու փոխներգործությունը:

Այս ամենի հետևանքով ուսումնական նյութը ավելի հետաքրքրաշարժ է դառնում և լավ է մտապահվում: Զննական սկզբունքը ուսուցման տեսության /դիդակտիկայի/ հիմնական սկզբունքներից մեկն է:Դիդակտիկան մանկավարժության այն բնագավառն է, որն ընդգրկում է ուսուցմանը վերաբերող հարցերը:

Աշխատանքը շարադրելիս հիմնականում ուղեցույց են հանդիսացել պատմաբաններ Կ.Ավետիսյանի «Պատանի աշխարհագրագետ», Ա.Մինասյանի «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» և Խ.Սարգսյանի «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա» աշխատությունները: Օգտվել ենք նաև էլեկտրոնային կայքերից և գրքերից, որոնցից կատարվել են որոշակի մեջբերումներ:

Դիդակտիկան, որը նշանակում է ուսուցման և դաստիարակության տեսություն, ուսուցման գործընթացը դիտարկում է որպես փոխներգործության մեջ գտնվող երկու տարբեր գործընթացներ, այսինքն՝ աշակերտների ճանաչողական գործունեությունը՝ սովորելը, և ուսուցչի մանկավարժական գործունեությունը՝ սովորեցնելը: Աշակերտների ճանաչողական գործընթացը աշխարհագրությունը սովորելու ընթացքում միավորում է՝

1. աշխարհագրական գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը,
2. մտավոր կարողությունների և ճանաչողական հետաքրքրությունների, վարքի նորմերի զարգացումը:

Դրանք, միևնույն ժամանակ, կապված աշակերտների ճանաչողական գործունեության հետ, ձևավորում են աշխարհի նյութական ընկալումը, բարոյահոգեբանական մի շարք այլ հատկանիշներ: Սովորողների (աշակերտների) ճանաչողական գործունեության այդ բոլոր դրսևորումները պետք է կարգավորվեն և ուղղություն տրվեն ուսուցչի անմիջական հսկողությամբ և մանկավարժական գործունեությամբ: Ուսուցման գործընթացը գիտելիքներ ձեռք բերելու, նրա բոլոր մանրամասներին ու առանձնահատկություններին տիրապետելու համար աշակերտներն

անցնում են բավականին բարդ և երկար ճանապարհ՝ կենդանի հայեցությունից դեպի աբստրակտ մտածողություն, վերադարձ պրակտիկայի:

Աշխարհագրության առարկայի վերաբերյալ գիտելիքների յուրացման գործընթացը զարգանում է միանգամից երկու ուղղություններով: Մի կողմից աշխարհագրություն սովորելու ընթացքում աշակերտների մոտ անընդհատ ավելանում են աշխարհագրական անվանացանկի քանակը, հասկացությունները, միևնույն ժամանակ ընդարձակվում ու խորանում են նախկինում յուրացրած հասկացությունների բովանդակությունն ու ծավալը, մյուս կողմից՝ յուրացված աշխարհագրական գիտելիքները աշակերտների մոտ դառնում են հմտություններ, կարողություններ, հեշտությամբ մտապահվում են և անհրաժեշտության դեպքում կիրառվում կյանքում: Այս բոլոր օղակները ուսուցման գործընթացում գտնվում են փոխադարձ կապի մեջ, համալրում են մեկը մյուսին: Հենց դա է պատճառը, որ ուսուցման տարբեր փուլերում տարբեր հասկացություններ գտնվում են ձևավորման տարբեր մակարդակներում ոչ միայն ծավալով ու խորությամբ, այլև իրենց յուրացման աստիճանով:

Ընդհանուր հասկացությունները՝ որպես վերացական մտածողության ձև, որը արտացոլում է առարկայի, երևույթի արտաքին հատկանիշները և հատկությունները, սերտորեն կապված են պատկերացումների հետ: Աշակերտներին անհայտ կամ հեռու գտնվող աշխարհագրական օբյեկտների, երևույթների վերաբերյալ հասկացությունները չեն յուրացվի, եթե նրանց մոտ չի ստեղծվում դրանց վերաբերյալ է պատկերացումներ:

Դիտողազգայական պատկերացումները մտային գործընթացներ են, որոնք աշակերտների գիտակցության մեջ հանդես են գալիս առարկայի, երևույթի, պատկերի, սխեմայի ու խոսքի տեսքով: Երեխայի գիտակցության այս գործընթացի վրա է հենվում վերացական մտածողությունը: Նշանակում է, որ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը համարվում է ինտենսիվ ճանաչողական գործընթաց, որի ընթացքում աշակերտների մոտ զարգանում են ճանաչողական հնարավորությունները և հետաքրքրությունները, միևնույն ժամանակ նրանք տիրապետում են մտավոր գործունեություն կատարելու հնարներին: Աշակերտների մտավոր զարգացումը հիմնականում պայմանավորված է

ձևավորված պատկերացումներով, հասկացություններով, կարողություններով և հմտություններով, որոնք էլ գտնվում են սերտ կապի մեջ, պայմանավորված են մեկը մյուսով և կազմում են մեկ միասնական գործընթաց: Միևնույն ժամանակ այդ գործընթացի յուրաքանչյուր կողմ տարբերվում է մեկը մյուսից, որը և հնարավորություն է տալիս դրանց. առանձին-առանձին ուսումնասիրելու:

Աշխարհագրության դասավանդման գործընթացը կարևոր դեր է իրականացնում ընդհանուր զարգացման գործում: Ուսուցման գործընթացի զարգացման գաղափարը պահանջում

է, որ աշակերտները սովորելիս ձեռք բերեն ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, այլև տիրապետեն մտային գործողություններ կատարելու ձևերին, որոնք հնարավորություն կընձեռեն այդ գիտելիքները տարբեր պայմաններում կիրառել և ճանաչողական նոր խնդիրները լուծելու համար: Գիտելիքների ձևավորման և նրանց կիրառման գործընթացում տարբեր բնույթի գործնական աշխատանքներ կատարելիս օգտագործում են տարբեր կարողություններ ու հմտություններ:

Օրինակ՝ երբ աշակերտները փորձում են համեմատել աշխարհագրական երկու օբյեկտներ, որոնք պատկերված են քարտեզի կամ հատակագծի վրա՝ պարզելու նրանց տարբերիչ գծերը, քարտեզի կամ հատակագծի միջոցով կազմել տարբեր օբյեկտների բնութագրերը: Այս դեպքում աշակերտները պետք է օգտագործեն քարտեզի կամ հատակագծի վերաբերյալ իրենց նախկինում ստացած գիտելիքները մասշտաբի, գույների, գծերի, պայմանական ու տեղագրական նշանների մասին տարրերը շատ լավ պատկերացնելուց հետո միայն աշակերտները քարտեզի կամ հատակագծի միջոցով կարող են կազմել որևէ տարածքի բնութագիրը: Այս գործընթացի հոգեբանական էությունը կայանում է նրանում, որ աշակերտները կատարում են մտածված գործողություններ, այսինքն՝կատարում են վերլուծություն, սինթեզավորում, համեմատություն, բացահայտում են կապի պատճառները և պատկերացումները, շփումները և այլն: Դրա համար էլ, ենթադրվում է, որ աշակերտի կողմից օգտագործվել են մտածված գործողությունների ձևեր:

Աշխարհագրության դասն իրենից ներկայացնում է ուսուցման կազմակերպման ձև, որի նպատակն է սովորողների կողմից որոշակի աշխարհագրական ուսումնական նյութի յուրացումը և աշխարհագրություն առարկայի վերաբերյալ գիտելիքների բազայի մեծացումը:Աշխարհագրության դասն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում և ունի առարկայի բնույթից բխող իր նպատակները, խնդիրներն ու մեթոդները: Աշխարհագրության դասի հիմնական նպատակը աշակերտի աշխարհագրական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն է, որոնք հիմք են հանդիսանում նրա աշխարհայացքի ձևավորման, հետագա զարգացման և դաստիարակության համար:

Դասն, ինչպես գիտեք, ուսուցման կազմակերպման ամենադինամիկ ձևն է, որում առկա են երկու հակադիր տարրեր՝ չափորոշիչայնությունը և ստեղծագործությունը: Սակայն միաժամանակ դրանք գտնվում են դիալեկտիկական (երկխոսության) միասնության մեջ: Այդ պատճառով էլ դասին ցուցաբերվող ստեղծագործական մոտեցումը պահանջում է նույն դասի չափորոշիչների լիարժեք իմացություն: Աշխարհագրության դասի նպատակ է աշխարհագրական գիտելիքների միջոցով անձի զարգացումը: Աշխարհագրական դասի հիմք է հանդիսանում ուսուցչի և աշակերտի գործունեության միասնականությունը, որը դրսևորվում է աշխարհագրական ուսումնական խնդրի լուծման ընթացքում:

Աշխարհագրության ուսուցման ընթացքում աշակերտների զարգացման հաջորդ ուղղությունը առարկայի նկատմամբ ճանաչողական հետաքրքրասիրության ձևավորումն է: Ճանաչողական հետաքրքրությունը հանդես է գալիս որպես գիտության ձգտելու հզոր մոտիվ և կարևոր տարր՝ աշակերտներին մղելու դեպի *«աշխարհագրություն»* առարկան, այն խորությամբ սովորելու, գիտակցված գործողություններ կատարելու: Այն աշակերտներին ստիպում է ձգտել էլ ավելի խորացնելու և հարստացնելու աշխարհագրական գիտելիքները: Աշխարհագրություն դասավանդող ուսուցիչները, մշտապես օգտագործելով այս հզոր զենքը, զարգացնում են աշակերտների ճանաչողական հետաքրքրասիրությունը, նրանց *«ուղեկցում»* են աշխարհագրության հետաքրքիր ու բարդ աշխարհը:

Աշխարհագրության ուսուցման ծրագրերում նախատեսված է ուսուցման կազմակերպման մի այնպիսի ձև, որը կոչվում է *դիտարկում:* Դիտարկումը՝ երևույթի նպատակային ընկալումն է դիտարկման միջոցով: Այն պայմանավորված է ուսումնական խնդրով՝ օրինակ եղանակային պայմանների փոփոխությունների ուսումնասիրումը: Դիտարկումներ կարող են անցկացվել աշխարհագրական հրապարակներում, էքսկուրսիաների ժամանակ, դպրոցի շրջակայքում և այլն:

Աշխարհագրության ուսուցումը դպրոցում մեր օրերում ձեռք է բերել անչափ կարևոր նշանակություն: Այն հնարավորություն է ընձեռում սովորողներին հիմնավոր գիտելիքներ ձեռք բերել բնության և մարդկային գործունեության բոլոր բնագավառների վերաբերյալ: Ուսուցանում է երևույթներն ու փաստերը դիտարկել փոխադարձ կապի ու պայմանավորվածության, այսինքն՝ դիալեկտիկական միասնության մեջ: Ընդլայնում է սովորողների աշխարհաճանաչողությունը, խորը և գիտակցված սեր է առաջացնում հայրենիքի, մարդկանց, բնական միջավայրի նկատմամբ: Լինելով գերզգայուն գիտություն կյանքում և աշխարհում կատարվող փոփոխությունների նկատմամբ:

Տիրապետել գիտության հիմունքներին՝ նշանակում է իմանալ գիտության ամենաէական, ամենահիմնական, ամենակարևոր հատկանիշները: Աշխարհագրական գիտության հիմունքների

ներմուծումը դպրոցական աշխարհագրության դասընթաց պահանջում է բավականին բարդ և յուրահատուկ մոտեցում: Անհրաժեշտություն զգացվեց շարունակել և խորացնել տիպաբանական մոտեցումը: Նման մոտեցումն այսօր ճանաչում է գտել աշխարհի բազմաթիվ երկրներում: Տիպաբանական սկզբունքի կիրառումը դպրոցական դասագրքերի ստեղծման գործընթացում ավելի ու ավելի է մոտեցնում դասավանդվող աշխարհագրությունը աշխարհագրական գիտության հետ: Ուսուցչի կողմից աշակերտների ուսումնական նյութը հաղորդելու, այն մատչելի դարձնելու, նյութն ու հիմնախնդիրները պարզ ու հասկանալի մատուցելու , առարկայի

նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու , աշակերտների մեջ ակտիվ , ինքնուրույն միտք արթնացնելու ընդունակությունն է :

Անհատական համակարգիչներով կահավորված դասարաններում կարող են կիրառվել մի շարք մանկավարժական մեթոդներ և ուսման եղանակներ (ինչպես օրինակ՝ խնդրի լուծմանն ուղղված և նախագծերի վրա հիմնված ուսուցում)։ Անհատական համակարգիչներով համալրված դասարանները շատ ավելի հարմար են ուսման ժամանակակից եղանակներ կիրառելու համար, քան ավանդական դասասենյակները, նույնիսկ եթե մեկ համակարգչից օգտվում է մի քանի աշակերտ։ Պատշաճ կերպով կազմակերպված ուսման և աշխատանքային պայմաններում համագործակցային ճանաչողական գործընթաց կազմակերպելու համար բավարար է մեկ կամ երկու անհատական համակարգիչ։ Տիպիկ SS սենյակն՝ իր սահմանափակ տարածքով և աշակերտական սեղանների ոչ ճկուն դասավորվածությամբ չի նպաստում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցման սարքերի ինտեգրմանը կրթական գործընթացին։

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔ

Վերլուծություն

Հետազոտական աշխատանքն իրականացվեց բնականգիտափորձի եղանակով՝ ք. Երևանի հ. 155 հիմնական դպրոցում, որին մասնակցեցին 6ա դասարանի աշակերտները։

«Աֆրիկա» թեմայի ավարտին աշակերտները լրացրեցին թեստ։ 6ա դասարանում դասերն իրականացվեցին դիդակտիկ պարագաների և նյութերի կիրառմամբ՝ այն դարձնելով հետազոտվող՝ փորձարարական։

«Աֆրիկա» թեմայի ուսումնասիրության ավարտին աշակերտները «գուգլֆորմս» գործիքի միջոցով լրացրեցին ստուգող թեստ, որում ներառված էին նկարներ, սխեմաներ։ «Աֆրիկա» թեմայի շրջանակներում մշակված գիտելիքների ստուգման արդյունքները ներկայացված էին ստորև բերված դիագրամում։

Առաջադիմություն



Ինչպես երևում է աղյուսակից, 6ա դասարանում, որտեղ պլանավորվեց և իրականացվեց «Աֆրիկա» թեմայով դասերը դիտազննական պարագաների կիրառմամբ,յուրացման մակարդակը բավականին բարձր է և չկան բավարար գնահատականներ:

Այսպիսով ամփոփելով դիդակտիկ պարագաների օգտագործումը,սովորողները պատկերային հիշողության ձևավորման նպատակով հետազոտության աշխարհագրության դասի օրինակով կարող ենք եզրակացնել, որ

- ուսումնասիրելով նյութերի կիրառումը դասապրոցեսում նպաստում է պատկերային և երկարաժամկետ հիշողության ձևավորմանը:
- Փորձարարական դասի իրականացումից հաստատվեց, որ ավելի պատկերավոր, հետաքրքիր և հուզարժեքային են, երբ անց են կացվում դիդակտիկ պարագաների կիրառությամբ:
- Վերլուծությունները ցույց տվեցին, որ դիդակտիկ պարագաների կիրառումն օգնում է ԿԱՊԿՈ աշակերտներին, նպաստում նրանց ուշադրության կենտրոնացմանն ու հիշողության լավացմանը:

	Լիարժեք		*Ոչլիարժեք*	
Տեսականգիտելիքներ	26	87%	4	13%
Էմպիրիկգիտելիքներ	24	80%	6	20%
Կարողություններ	25	83%	5	17%
Ստեղծագործականգործունեությանփորձ	26	87%	4	13%
Հուզարժեքայինփորձ	27	90%	3	10%
Տարածաշրջանայինբաղադրիչ	26	87%	4	13%

6. Եզրակացություն

Ժամանակակից հանրակրթական չափորոշիչը ենթադրում է աշակերտի զինում այնպիսի գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, որոնք նրան հնարավորություն կտան կռահել մարդկության արագ առաջընթացը, կիրառել ժամանակակից գիտության նվաճումները, դառնալ հասարակության լիարժեք անդամ: Պասիվ գիտելիք ստացողից աշակերտը պետք է ձևավորվի որպես եռանդուն գիտակ, որը կկարողանա ստացած գիտելիքները կիրառել ինչպես ի շահ մասնագիտական հաջողությունների, այնպես էլ ի շահ հասարակության բարօրության:

Տարբեր ժամանակահատվածներում կրթության բովանդակությունը, ուսուցման մեթոդները, ուսուցման կազմակերպման ձևերը փոփոխվել են, ելնելով տվյալ հասարակության՝ դպրոցին ներկայացրած պահանջներից Մեր օրերում դրանք նույնպես փոփոխվում են, կատարելագործվում՝ հաշվի առնելով հասարակության նոր պահանջներին ու գիտատեխնիկական առաջընթացի ու զարգացման միտումները: Սխալ կլինի կարծել, թե դիդակտիկայի հետազոտության առարկան միայն ուսուցումն է, կամ ինչպես Պիդկասիստին է ընդունում՝ դասավանդման և ուսման միասնությունը: Բայց չէ որ ուսանել, նշանակում է սովորել: Ուրեմն՝ դիդակտիկայի առարկան միայն մասնավորաբար է ուսումը:

Ինչպես հայտնի է. դիդակտիկան հետազոտում է սուբյեկտի ճանաչողական գործունեության այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք իրացվում են դասավանդման, ուսուցման և ինքնուսուցման ուղիներով, այլ կերպ ասած՝ կրթության միջոցով: Ուրեմն՝ դիդակտիկայի առարկան միաժամանակ կրթությունն ու նրա օրինաչափություններն են:

Այնուհետև՝ դիդակտիկան միաժամանակ հետազոտում է այն բոլոր օրինաչափությունները, որոնք առանձին-առանձին արտացոլված են ուսումնական առարկաների դասավանդման մեջ: Ուրեմն՝ դիդակտիկան հետազոտում է նաև ուսումնական առարկաները, դրանցում եղած գիտելիքների յուրացման յուրահատկություններն ու առանձնահատկությունները: Նշանակում է՝ դիդակտիկայի առարկան նաև մասնավոր մեթոդիկաներն են:

Հետևապես դժվար չէ եզրակացնել, որ դիդակտիկայի հետազոտության առարկան ուսուցումը, ուսումը, դասավանդումը, կրթությունը և մասնավոր մեթոդիկաներն են, այդ բոլորի միասնությունը: Ապա փորձեք դրանցից որև մեկը բացառել: Պարզ է չի իրականացվի ոչ ուսուցումը, ոչ կրթությունը և ոչ էլ զարգացումը, հետևապես նաև դաստիարակությունը :

Ուսումնասիրելով սույն աշխատանքը՝ մենք հնարավորություն ունեցանք ծանոթանալ աշխարհագրություն գիտության ծագմանն ու ձևավորմանը: Սակայն դրա հետ մեկտեղ նաև կարողացանք բացահայտել աշխարհագրության ուսումնասիրության առարկան, նպատակները, դրա ձևավորման անցած ուղին ու կայացման պատմությունը, որը մեզ հնարավորություն ընձեռեց պատկերացում կազմել կյանքի հետ աշխարհագրության ունեցած կապի մասին: Մենք ծանոթացանք ոչ միայն աշխարհագրության ձևավորման պատմությանը, այլև հնարավորություն ստացանք պատկերացում կազմել աշխարհագրություն դասավանդող ուսուցչի/դասախոսի գործունեության, դասապատրաստման մեթոդներին և նրան ունկնդրող սովորողի (աշակերտի, ուսանողի) դրսևորմանը: Ընդհանուր առմամբ աշխատանքի ուսումնասիրության շնորհիվ մենք շատ բաներ իմացանք ու բացահայտեցինք աշխարհագրության ուսուցման մեթոդների վերաբերյալ:

Ուսուցումը, կրթությունը, զարգացումը օրինաչափորեն փոխկապակցված են միմյանց և դաստիարակության հետ: Առանց ուսուցման և կրթության չկա և չի կարող լինել կազմակերպված դաստիարակություն և հակառակը: Կարելի է ասել՝ դատիարակության տեսությունն ու պրակտիկան «սնվում » են ուուցման տեսությունից ու պրակտիկայից, վերջիններս էլ՝ դաստիարակության տեսությունից ու պրակտիկայից:

Ուրեմն՝ ուսուցման սկզբունք է կոչվում այն ելակետը, հիմքը, ղեկավարվող գաղափարը, պահանջը, դրույթը, կանոնը, որոնցով կառավարումն ու կատարումը ապահովում են ուսուցման գործընթացի անհրաժեշտ արդյունավետությունը:

Ուսուցման սկզբունքներն օգնում են համալիր ձևով լուծել կրթության, դաստիարակության, զարգացման խնդիրները և ձևավորել սովորողների գիտական աշխարհայացքը և հասարակական վարքը:

7. Գրականություն

1. 1«Աշխարհագրության դերը և գլխավոր խնդիրները» – http://p666666.blogspot.am (21. 03. 2014)
2. Մինասյան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները», «Ասողիկ» 2011թ.
3. Ավետիսյան Կ., «Պատանի աշխարհագրագետ», Երևան, 1985:
4. Մինասյան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները», «Ասողիկ» 2011թ.
5. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան, 2013, էջ 38:
6. Սարգսյան Խ. «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա», Երևան «Զանգակ» հրատ. 2002թ.
7. Вендровская Р. Б. Очерки истории советской дидактики. — М.: Педагогика, 1982. — 128 с
8. Вильман О. Дидактика как теория образования. / Пер. с нем. Т. 1-2. — М.: Тихомиров, 1908. Т. 1. — 470 с.; т. 2. — 678 с.
9. Гребенёв И. В. Дидактика предмета и методика обучения // Педагогика, 2003. № 1, стр. 14-21.
10. Оконь В. Введение в общую дидактику. /Пер. с польского. — М.: Педагогика, 1990. 256 с.
11. Осмоловская И. М. Дидактика. — М.: Издательский центр «Академия», 2006. 240 с.
12. Основы дидактики / Под ред. Б. П. Есипова. — М.: Просвещение, 1967.
13. Рудакова И. Дидактика. — М.: Феникс, 2005. — 256 с.
14. Ситаров В. А. Дидактика / Под ред. В. А. Сластенина — М.: Издательский центр «Академия», 2004. — 368 с.
15. Слинкин С. В. Дидактика современного высшего профессионального образования:учебное пособие для институтов и факультетов повышения квалификации/С. В. Слинкин; Тобольск: ТГСПА им. Д. И. Менделеева, 2014. 315 с.
16. Скаткин М. Н. Проблемы современной дидактики. — 2-е изд. — М.: Педагогика, 1984. — 95 с.
17. Сорокин Н. А. Дидактика: Учеб. пособие для студентов пед. ин-тов. — М.: Просвещение, 1974. — 221 с.
18. Хуторской А. В. Практикум по дидактике и современным методикам обучения. — СПб.: Питер, 2004. — 541 с.; ил. — (Серия «Учебное пособие»).
19. Хуторской А. В. Современная дидактика. Учебное пособие. 2-е издание, переработанное / А. В. Хуторской. — М.: Высшая школа, 2007. 639 с.

20. «Աշխարհագրության դերը և գլխավոր խնդիրները» http://p666666.blogspot.am(21. 03. 2014)
21. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան, 2013:
22. Նալչաջյան Ա., Մկրտչյան Ս., Հոգեբանության ներածություն, Երևան 2001թ.
23. Սարգսյան Խ., «Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա», Երևան, 2002:
24. Баранский Н., «Современные проблемы географии», Москва, 1964.
25. «География в современном мире» http://files.school-collection.edu.ru (08. 05. 2017)
26. Петрова Е., «Теория и методика обучения географии», Томск, 2010.